# ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁ

## ԱՐԱՐԱՏ ԽՈՇՈՐԱՑՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՍԼԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ՝ ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

Արարատ համայնքի հարգելի՛ բնակիչներ, շնորհավորում եմ բոլորիս՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության օրվա կապակցությամբ: 1995 թվականի հուլիսի 5-ին համաժողովրդական հանրաքվեով Սահմանադրության ընդունումից հետո հուլիսի 5-ը դարձավ պետական տոն՝ Սահմանադրության օր:

Սահմանադրությունը՝ մեր պետական, հասարակական, քաղաքական ու սոցիալական կյանքը կարգավորող մայր օրենքն է և մեր քաղաքակիրթ հասարակարգի հիմնասյունը, որով պարտավոր է առաջնորդվել մեզանից յուրաքանչյուրը: Մեզանից յուրաքանչյուրը, անկախ իր մասնագիտությունից, քաղաքական հայացքներից և զբաղեցրած հասարակական դիրքից, պետք է սրբորեն վերաբերվի պետական խորհրդանիշներին և մեր Սահմանադրությանը:

Կրկին շնորհավորում եմ բոլորիս Սահմանադրության և պետական խորհրդանիշների օրվա՝ հուլիսի 5-ի առթիվ՝ մաղթելով մեր ժողովրդին խաղաղություն ու բարեկեցություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՍԼԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ